Ֆիզիկական անձանց Պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման սակագներ	
Ծառայության անվանումը	**Սակագին**
Հաշվի արժույթ	ՀՀ դրամ
Հաշվի բացում	Անվճար
Հաշվի տարեկան սպասարկում	Անվճար
Հաշվի նվազագույն մնացորդ	Չի կիրառվում
Հաշվի փակում	Անվճար
Հաշվին հաշվեգրվող տարեկան տոկոսադրույք	(ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք + 0.5%)*
Տոկոսների հաշվեգրման եղանակ	Յուրաքանչյուր տարվա վերջում՝ տարեկան կապիտալացմամբ
Հաշվի վաղաժամկետ փակման դեպքում կիրառվող տոկոսադրույք	Մինչև 365 օր գործող հաշիվը փակելու դեպքում՝ 0.01%*
	366 օր և ավել գործող հաշիվը փակելու դեպքում՝ փակման պահին գործող ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք +0.5%
Հաշվի վերաբերյալ հայերեն լեզվով տեղեկանքի տրամադրում	Անվճար
Ներբանկային փոխանցումներ	Անվճար**
Միջբանկային փոխանցումներ	Անվճար**
Հաշվի համալրում	Գործում է հաշվի բացման պահից մինչև 17 տարին (ներառյալ)***
Այլ ծառայություններ	Համաձայն Բանկում գործող սակագների

* Պետական աջակցության հաշվի գործողության ընթացքում հաշվի համար կիրառվող տարեկան տոկոսադրույքն ենթակա է փոփոխման և համապատասխանեցման ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման նոր՝ փոփոխված տոկոսադրույքին:

** Մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը Պետական աջակցության հաշվից փոխանցումներն կարող են իրականացվել բացառապես հետևյալ 5 ուղղություններով՝

1) Հայաստանի Հանրապետությունում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն Հաշվետիրոջ ծնողն է (բացառությամբ խնամակալի).

2) Հաշվետիրոջ կամ Հաշվետիրոջ կար·ավիճը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, Հաշվետիրոջ Ծնողի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու համար,

3) Հաշվետիրոջ Ծնողին (բացառությամբ խնամակալի) տրամադրված վարկի տոկոսա·ումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կար·ի համաձայն և առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի"Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի" իրականացման գրասենյակի պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը՝ վարկը նպատակային օ·տագործելու վերաբերյալ.

4)Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող ·յուղական բնակավայրերում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այ·ուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) գնման համար, եթե գնորդը Հաշվետիրոջ Ծնողն է՝ բացառությամբ խնամակալի (գումարը գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով).

5) Ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական կամ միանվագ վճարումներ կատարելով, բայց ոչ ավել, քան ամսական 50000 դրամը

*** Մինչև հաշվի փակումը վերջին 365 օրացույցային օրվա ընթացքում համալրված գումարների համար կիրառվում է 0.01%: